ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 142

ք. Երևան 30.08.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-9/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ՝ 00498192, գործունեության հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ փ. 63/23/ (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև 17.06.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05/04/2024թ. թիվ Ե/801-24 և 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Կազմակերպության միջև 17.06.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-9/5-7 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. օգոստոսի 20-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ